ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-11/17» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2017թ-ի մարտի 9-ին կնքված թիվ «ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-11/17» ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2017թ-ի մարտի 30-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի 4.2 կետը ծմբագրել, ինչպես նաև՝ Պայմանագիրը լրացնել 7.10 կետով:

Փոփոխության նկարագրություն: Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի 4.2 կետում <<սակայն ոչ ուշ, քան 28.12.2017թ.:>> բառերը փոխարինել <<սակայն ոչ ուշ, քան 30.12.2017թ.:>> բառերով, ինչպես նաև՝ Պայմանագիրը լրացնել 7.10 կետով՝ հետևյալ խմբագրությամբ <<Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:>>:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.3 կետ, ինչպես նաև պահպանվել են «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության թիվ 168-Ն որոշմամբ սահմանված պահանջները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժին՝ Դավիթ Թովմասյանին:

Հեռախոս՝ 511-788, 511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
09.03.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N << ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-11/17>> ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«30» մարտի 2017թ.

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵԳՆԱ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ծախմուրադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 09.03.2017թ. կնքված N <<ԴԴ-ԲԸԱՀ-ԾՁԲ-11/17>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 4.2 կետում <<սակայն ոչ ուշ, քան 28.12.2017թ.:>> բառերը փոխարինել <<սակայն ոչ ուշ, քան 30.12.2017թ.:>> բառերով:

1.2 Պայմանագիրը լրացնել 7.10 կետով՝ հետևյալ խմբագրությամբ <<Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:>>:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«ՄԵԳՆԱ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե ք. Երևան, Կոմիտաս 47,
ՀՎՀՀ՝ 02583241	իրավ.հասցե՝ Ն. Տիգրանյան 1,փակուղի 1
Հ/Հ՝ 900011192151	ՀՎՀՀ՝ 00083019
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ՝ 002-080588001
	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	**Տնօրեն՝ Ա.Ծախմուրադյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	